

ՌԱԶՄԻՆՖՈ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ
ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
2012-2013թթ.

Էդգար Էլբակյան,
միջազգայնագետ

Մերձավոր Արևելքում այս կամ այն չափով մշտապես ազդեցիկ գործոններից են եղել քուրդ ժողովրդի քաղաքական ձգտումները և դրանցով պայմանավորված՝ վերջինիս գործունեությունը:

Տարբեր հաշվարկների միջինացված տվյալներով՝ Թուրքիայի տարածքում բնակվում է մոտավորապես 12-20 մլն քուրդ, որոնց կազմակերպված զինյալ պայքարը Թուրքիայի Հանրապետության տարածքում քրդական ինքնավարության կամ անկախության համար, սկսյալ 80-ականներից՝ հասավ պատմական նոր հանգրվանի: Սիրիայում ընթացող քաղաքացիական պատերազմը քաղաքականապես ակտիվացրեց Սիրիայի քրդերին, որոնք տարբեր հաշվարկներով՝ կազմում են Սիրիայի բնակչության 9-12 տոկոսը¹ և բնակվում են գերազանցապես երկրի հյուսիսային և հյուսիսարևելյան հատվածներում, որոնք սահմանակից են Թուրքիայի Հանրապետությանը: Քրդերի մի մասն էլ, սոցիալ-տնտեսական դժվարություններից ելնելով, հաստատվել է Հալեպում, Դամասկոսում և Լաթաքիայում, որտեղ կազմվել են քրդական համայնքներ²:

Սույն ուսումնասիրության օբյեկտը, որպես այդպիսին՝ թուրք-սիրիական հարաբերություններն են, իսկ առարկան՝ քրդական գործոնն այդ հարաբերություններում, մասնավորապես՝ 2012-2013թթ. սիրիական ճգնաժամի իրադարձությունների համապատկերում:

Ընթերցողին թեմայի շուրջ համապարփակ տեղեկություն տրամադրելու, ինչպես նաև շարադրանքն ավելի ընդգրկուն և օրգանապես փոխկապված դարձնելու նպատակով՝ ուսումնասիրությունը կբաժանենք համանման կատեգորիաների պատկանող ենթահարցային գլուխների՝ որպես ուսումնասիրվող հարցի բաղադրիչներ:

Սիրիա-Թուրքիա հարաբերությունները. հակամարտություն և համագործակցություն

Թուրքիայի և Սիրիայի հարաբերությունները՝ որպես նախկին սյուլզերենի-տիտղոսային ազգի և վասալային վիլայեթի, մշտապես աչքի են ընկնել ինդրայնությամբ՝ հիմքում ունենալով ինչպես գաղութային անցյալը, այնպես էլ անկախ Թուրքիայի և անկախ Սիրիայի միջև

1 Տակավին 2006թ. Սիրիայում քրդական կուսակցությունները այնչու էին, որ երկրում բնակվում են 2,5 միլիոն քրդեր (Kurdish parties in Syria defy banning decision - <http://www.arabicnews.com/ansub/Daily/Day/040616/2004061610.html>):

2 "Syria, The Silenced Kurds", **Human Rights Watch Report**, October 1996, vol. 8, No. 4(E) - <http://www.hrw.org/reports/1996/Syria.htm>:

առաջացած տարածայնությունները:

1938թ. սկսած՝ Նախկին Ալեքսանդրետի սանջաքի կամ Ներկայիս թուրքական Հաթայի շրջանի նկատմամբ տիտղոսի հարցը մշտապես վիճելի կետ է եղել երկու երկրների հարաբերություններում: 1938թ., երբ լրացավ Ֆրանսիայի սիրիական մանդատի ժամկետը, Հաթայը հռչակվեց անկախ պետություն: Թուրքիային հաջողվեց մարզի մեծամասնությունը կազմող ալևի արաբներին և հայերին տեղահանելով, ինչպես նաև մարզը թուրքերով վերաբնակեցնելով՝ փոխել վերջինիս ժողովրդագրական կազմը, ինչի պատճառով 1939թ. հանրաքվեի ժամանակ մարզը միացավ Թուրքիային: Վերջինիս այս հարցում անթաքույց աջակցություն ցույց տվեց Ֆրանսիան՝ ջանալով Թուրքիային հետ պահել ընդդեմ Ֆրանսիայի՝ Առանցքի երկրներին միանալուց³: Սիրիան հրաժարվեց ճանաչել մարզի բնակցումը Թուրքիային և սեփական քարտեզների վրա շարունակեց մարզը պատկերել իր կազմում⁴:

Երկու երկրների հարաբերություններում առկա մյուս էութենական խնդիրը ջրի խնդիրն է: Թուրքիայի, Սիրիայի և Իրաքի տարածքներով հոսող Եփրատ և Տիգրիս գետերի թուրքական հատվածներում երկու ջրամբարտակների կառուցումը, ինչպես նաև 1976թ. Հարավանատուլիական Նախագծի գործարկումը բերեցին Նրան, որ Էապես քչացան Թուրքիայից Սիրիա և Իրաք հոսող ջրի ծավալները⁵: Մասնագետները նշում են, որ Սիրիայի և Իրաքի ջրագրկումը համահունչ է արաբների հանդեպ թուրք ազգայնականների տածած ատելության հիման վրա առաջացած պետական գաղափարախոսությանը և դրա էութենական հանրագումարը հանդիսացող «հպարտ եմ, որ թուրք եմ» կարգախոսին, որն ինքնին ենթադրում է ոչ թուրքերի ստորադաս կացությունը: Ուստի, Սիրիայի և Իրաքի գոյությունը ինքնին հակասում է Թուրքիայի շահերին, և վերջիններս պետք է զրկվեն կենսական պաշարներից, քանզի դրանց բնակիչները թուրքեր չեն⁶:

Հիմնականում այս խնդիրները ձևավորեցին հակամարտային բովանդակություն Թուրքիա-Սիրիա հարաբերություններում, ինչը և պատճառ հանդիսացավ, որ Սիրիան տարիներ շարունակ աջակցի

3 **Kalpakistan J.**, Identity, Conflict and Cooperation in International River Systems, Ashgate Publishing Company, 2004, էջ 130:

4 Սիրիայի զբոսաշրջության նախարարության պաշտոնական կայքում տեղադրված քարտեզը տե՛ս <http://www.danielpipes.org/pics/new/large/269.jpg>, (22.12.2006թ.), խորհրդարանի պաշտոնական կայքում տեղադրվածը՝ <http://www.danielpipes.org/pics/new/large/1515.jpg>, (10.12.2010թ.):

5 **Morris Ch.**, The New Turkey, London, էջք 204-227:

6 **Kalpakistan J.**, Op.cit.:

քուրդ ժողովրդի հակաթուրքական պայքարին, ինչպես նաև 1979թ. մայիսից՝ ապաստան տա Զրդստանի աշխատավորական կուսակցության մի շարք առաջնորդների, ներառյալ՝ ղեկավար Աբդուլլահ Օջալանին: 1998թ. հոկտեմբերին Թուրքիան շուրջ 80 հազարանոց զորք կենտրոնացրեց Սիրիայի հետ սահմանին՝ սպառնալով պատերազմով, եթե վերջինս չարտահանձնի Օջալանին և չփակի իր տարածքում գործող PKK ճամբարները: Խուսափելով Թուրքիայի, ասել է թե՛ ամբողջ ՆԱՏՕ-ի հետ զինված հակամարտությունից՝ նախագահ Հաֆեզ ալ-Ասադը տեղի տվեց և արտաքսեց Օջալանին երկրից՝ միևնույն ժամանակ չհանձնելով նրան Թուրքիային⁷:

Հարաբերություններում սկսվեց ջերմություն նկատվել: 1998թ. հոկտեմբերի 20-ին ստորագրված Ադանայի պայմանագիրը շրջադարձային եղավ երկու երկրների հարաբերություններում: Պայմանագրի առաջին հոդվածով Սիրիան փոխադարձության սկզբունքով պարտավորվում էր թույլ չտալ սեփական տարածքից բխող և Թուրքիայի անվտանգությանն ու ապահովությանը վնաս հասցնող որևէ գործունեություն⁸: Պայմանագիրը նախատեսում էր համագործակցություն PKK դեմ պայքարում⁹, և բարենպաստ պայմաններ ստեղծեց ամենատարբեր ոլորտներում հարաբերությունների բարելավման համար¹⁰: Այն բանից հետո, երբ Թուրքիայում 2002թ. իշխանության եկավ «Արդարություն և զարգացում» իսլամամետ կուսակցությունը, որը հռչակեց ժողովրդավարության և իսլամի դրույթների համադրման և հարևանների հետ խնդիրներ չունենալու արտաքին քաղաքական սկզբունքները, երկու երկրների հարաբերությունների զարգացման համար նոր հենք ստեղծվեց: Այսպես, ԱՄՆ-ի իրաքյան ներխուժման ընթացքում Թուրքիան, ինչպես հայտնի է, հրաժարվեց սեփական տարածքը տրամադրել դեպի Հյուսիսային Իրաք զորքեր տեղափոխելու համար, ինչը մեծապես բարձրացրեց նրա հեղինակությունը արաբական աշխարհում՝ որպես ինքնուրույնաբար որոշումներ կայացնելու ընդունակ երկիր¹¹: Նշված պատմական ժամանակահատվածում ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական որոշակի հանգամանքներ նպաստեցին թուրք-սիրիական մերձեցմանը՝

7 Տե՛ս Աբդուլլահ Օջալանի մասին տեղեկանքը ռուսական «Ագենտուրա.Րու» հետազոտական կենտրոնի կայքում <http://www.agentura.ru/dossier/turkey/ocalan/>:

8 **Gaytancıoğlu K.**, Soğuk savaş sonrası dönemde Türkiye-Suriye ilişkilerinin Ortadoğu politikasına etkisi, Edirne, 2008, էջ 105:

9 PKK պայմանագրի երկրորդ կետով Սիրիայի կողմից ճանաչվում էր ահաբեկչական կազմակերպություն:

10 Relations between Turkey-Syria - <http://www.mfa.gov.tr/relations-between-turkey%E2%80%9393syria.en.mfa>:

11 **Balci A., Yesiltas M.**, “Turkey’s New Middle East Policy: The Case of the Meeting of the Foreign Ministers of Iraq’s Neighboring Countries, Journal of South Asian and Middle Eastern Studies, XXIX (4), 2006, էջ 18-38:

- ամերիկյան գործողությունների հետևանքով թուլացող իրաքյան և իրանական շուկաներին միմյանց համար փոխադարձաբար փոխարինելու եկան թուրքականը և սիրիականը¹²,
- տարածաշրջանում ամերիկյան ներխուժման հետևանքով Իրաքի հյուսիսում ստեղծվեց քրդական ինքնավարություն. բանն այն է, որ Մերձավոր Արևելքում քրդական տարրի ռազմաքաղաքական պոտենցիալի աճը այսպես թե այնպես հակասում է և՛ Թուրքիայի, և՛ Իրաքի, և՛ Իրանի, և՛ Սիրիայի շահերին, և կարող է համագործակցային բովանդակություն ստեղծել այդ երկրների հարաբերություններում:

Այսպիսով՝ քրդական սպառնալիքը և տարածաշրջանային անկայունությունը նպաստեցին երկու երկրների բազմակողմանի համագործակցությանը: 2004թ.՝ Սիրիայում Բաշար Ասադի ղեկավարման տարիներին, կնքվեց Ազատ առևտրի մասին համաձայնագիր, երկկողմանիորեն վերացվեց վիզային ռեժիմը, սկսեցին իրականացվել համատեղ էներգետիկ ծրագրեր, ինչպես նաև ռազմական զորավարժություններ¹³:

Քրդերը և քրդական հարցը Սիրիայում

Սիրիայում քրդերը մշտապես ունեցել են իրավական առումով սեգրեգացված կարգավիճակ՝ զուրկ մի շարք տարրական իրավունքներից, ներառյալ՝ քաղաքացիության, սեփականության, ամուսնության, կրթության և աշխատանքի իրավունքները: Տարիներ շարունակ սիրիական իշխանությունները վարել են քրդերի և քրդական տեղանունների արաբականացման քաղաքականություն: 1986թ. մարտին, երբ Դամասկոսի քրդական հատվածում մի քանի հազար քրդեր փորձեցին նշել Նովրուզը, կառավարությունը խստորեն զգուշացրեց, որ տոնակատարությունը, ինչպես նաև քրդական դրոշի կիրառումն արգելված են: Ի հետևանս պատահարի՝ ոստիկանական կրակոցներից զոհվեց մեկ քուրդ, որի թաղմանը Ղամիշլիում մասնակցեց շուրջ 40,000 քուրդ¹⁴: Արդեն 2004թ. մեկ այլ դեպք տեղի ունեցավ հենց Ղամիշլիում, երբ ֆուտբոլային խաղից հետո արաբ և քուրդ երկրպագուների միջև առաջացավ բախում, և ոստիկանության միջամտության հետևանքով սպանվեց 65 քուրդ, իսկ 100-ից ավել մարդ վիրավորվեց կամ բան-

12 **Hugh P.**, Turkey's Tangled Syria Policy, CTC Sentinel, vol. 6, issue 8, August 2013, էջ 5:

13 Տնտեսական համագործակցության ցուցանիշների մասին տե՛ս **ԹՀ արտգործնախարարության պաշտոնական կայքում** http://www.mfa.gov.tr/turkey_s-commercial-and-economic-relations-with-syria.en.mfa, իսկ քաղաքական համագործակցության մասին ակնարկ՝ նույն տեղում <http://www.mfa.gov.tr/relations-between-turkey%E2%80%93syria.en.mfa>:

14 **Vanly I.**, The Kurds in Syria and Lebanon, 1992, էջք 163-164:

տարկվեց և ենթարկվեց կտտանքների¹⁵:

Սիրիայի քրդերի հարցի միջազգայնացման և առհասարակ Սիրիայի քրդերի քաղաքական ակտիվացման կարևոր հանգրվաններից էր Սիրիայի քրդերի ազգային խորհրդի ստեղծումը, որը լիազորված էր ներկայացնելու Սիրիայի քրդերին ԱՄՆ Սենատում և ԵՄ Խորհրդարանում: Նրանց խնդիրն էր հասնել Սիրիայի ժողովրդավարացմանը, փոքրամասնությունների իրավունքների պահպանմանը և Սիրիայում դաշնային պետության ստեղծմանը: Քաղաքական պայքարի ռազմական մեթոդների չնախանշումը ինքնին պայմանավորում էր նման չափավոր դիրքորոշումը:

«Արաբական գարնան» համատեքստում Սիրիայում քաղաքացիական պատերազմի սկզբնական շրջանում երկրի հյուսիսային հատվածներում ապստամբ ուժերի մասնակի հաջողությունները ստիպեցին սիրիական կառավարությանը քաղաքացիություն շնորհել 200,000 ապաքաղաքացի քրդերի՝ ջանալով այդպիսով սիրաշահել նրանց և կանխել քրդերի անցումը ապստամբների կողմը, ինչը մեծավ մասամբ հաջողվեց¹⁶: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ սիրիական ընդդիմությանը քաղաքական աջակցություն էր ցուցաբերում Թուրքիան, որի նկատմամբ քրդերը բացասաբար են տրամադրված: Վերջին դերը չխաղաց նաև քրդերի՝ պատշաճ մակարդակով չներկայացվածությունը Սիրիական ազգային խորհրդում¹⁷: Քրդերի շրջանում աստիճանաբար աճում էին Ասադների կառավարման տարիներին ապրած իրավազուրկ և սեգրեգացված վիճակը թոթափելու մղումը և պատերազմի ավարտին Իրաքի հյուսիսի քրդերի օրինակով ապակենտրոնացված ինքնավարություն ունենալու ակնկալիքը¹⁸:

Սիրիայի քրդերի և առհասարակ քրդական գործոնի ակտիվացումը վրա հասավ այն բանից հետո, երբ կառավարական ուժերը մեծ մասամբ լքեցին երկրի հյուսիսի և հյուսիս-արևելքի քրդաբնակ շրջանները¹⁹ (բացառությամբ Ղամիշլիի), և քրդերը լծվեցին սեփական ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդմանը²⁰:

15 Syria: Address Grievances Underlying Kurdish Unrest, **Human Rights Watch** - <http://www.hrw.org/en/news/2004/03/18/syria-address-grievances-underlying-kurdish-unrest>:

16 Legislative Decree on Granting Syrian Nationality to People Registered in Registers of Hasaka Foreigners - <http://sana.sy/eng/21/2011/04/08/pr-340560.htm>:

17 **Weiss M.**, New Republic: Will Kurds Determine Syria's Fate? - <http://www.npr.org/2011/11/16/142387417/new-republic-will-kurds-determine-syrias-fate>:

18 Syria opposition rifts give world excuse not to act - <http://uk.reuters.com/article/2012/07/04/uk-syria-crisis-rifts-idUKBRE8630IY20120704>:

19 **Shaoul J.**, Syria's Kurdish-Islamist conflict destabilises Turkey, World Socialist Web Site - <http://www.wsws.org/en/articles/2013/08/24/kurd-a24.html>:

20 Сирийские курды объединились для борьбы с повстанцами - <http://www.youtube.com/watch?v=rkXAPyFP8Bc>:

Քրդերի միասնականացման և քաղաքական դերակատարության մեծացման առաջին կարևոր քայլը 2012թ. հուլիսի 12-ին Արբիլում կնքված համաձայնագիրն էր՝ քրդական ժողովրդավարական միություն կուսակցության (PYD) և Քրդական ազգային խորհրդի (KNC) միջև՝ Հյուսիսային Իրաքում քրդական ինքնավարության դեկլարացիայի Բարզանիի միջնորդությամբ²¹: Ի հետևանս պայմանագրի՝ ստեղծվեց Քրդական բարձրագույն հանձնաժողով, որտեղ երկու կողմերը ներկայացված են հավասարապես: Տեղին է նշել, որ քրդական շրջանների ռազմաքաղաքական վակուումիզացիայի ընթացքում, երբ PYD-ն մերժում էր KNC-ի հետ համագործակցության ցանկացած տարբերակ, երկու կողմերի միջև երբեմն տեղի էին ունենում զինված բախումներ: Բայց Բարզանիին հաջողվեց ճնշում գործադրել երկու կողմերի վրա, նրանց մատնանշել քրդական միասնության կարևորությունը, և Ասադի չիրականացված խոստումներից հիասթափված քրդական ուժերը համախմբել իր հովանու ներքո²²: Քրդական բարձրագույն հանձնաժողովի տնօրինության տակ անցան դեռևս 2004թ. Ղամիշլիի դեպքերից հետո ստեղծված ժողովրդական պաշտպանության խմբերը (YPG)՝ որպես վերջինիս ռազմական միավորում՝ կոչված գեներով պաշտպանելու քուրդ ժողովրդին²³: Ձեռք բերվեց համաձայնություն, որ քրդական ուժերի տիրապետության տակ անցնող քաղաքները կառավարվելու են համատեղ, մինչև հնարավորություն լինի կազմակերպելու ընտրություններ:

Տեղին է հիշատակել, որ պայմանագիրը արմատապես չմարեց քրդական ուժերի միջև եղած բոլոր հակասությունները, և մերթընդմերթ նկատվում են հակամարտության դեպքեր²⁴, ինչի պատճառը մասամբ այն է, որ PYD միակ զինված ուժն է քրդական կուսակցությունների շարքում²⁵, և համարվում է PKK-ի սիրիական թևը:

Թուրքիան և Սիրիայի քրդական հարցի նոր փուլը

Ինչպես նշում է «NOW Lebanon» լրատվականի թղթակից Մայքլ Վեյսը, «քրդական հարցը միջազգայնացվում է, իսկ մյուս կողմից էլ ջիհա-

21 **Tanrikulu S.**, Türkiye'nin Kürt sorunu politikası ve bölgedeki gelişmeler, Heinrich Böll Stiftung, էջ 27 - http://www.tr.boell.org/downloads/sezgin_tanikulu_persp.2_tr.pdf:

22 Barzani Unites Syrian Kurds Against Assad - <http://www.al-monitor.com/pulse/politics/2012/07/barzani-grabs-assads-kurdish-car.html>:

23 Conflict Intensifies In Syria's Kurdish Area - <http://www.al-monitor.com/pulse/originals/2013/04/conflict-intensifies-syrian-kurdish-region.html>:

24 The Kurdish Democratic Union Party - <http://carnegie-mec.org/publications/?fa=48526&reloadFlag=1>:

25 Liberated Kurdish cities in Syrian Kurdistan move into next phase - <http://www.ekurd.net/mismas/articles/misc2012/7/syriakurd554.htm>; Is Turkey rethinking the Syrian Kurd issue? - <http://globalpublicsquare.blogs.cnn.com/2013/08/21/is-turkey-rethinking-the-syrian-kurd-issue/>:

դիստների հարձակման հետևանքով՝ քրդական ուժերը միավորվեցին, և սրանք մղձավանջ են Թուրքիայի համար»²⁶: Որպես նախկին կայսրություն՝ Թուրքիան իր սահմանների հարևանությամբ տեղի ունեցող ամեն ինչին վերաբերում է պետական «զգայունությամբ», հատկապես, եթե խոսքը քրդական հարցի մասին է, ինչը բացի արտաքին և տարածաշրջանային հիմնախնդրից՝ Թուրքիայի համար նաև ներքաղաքական հարց է: Այս պատճառով էլ՝ արբիյան համաձայնագրից անմիջապես հետո, ջանալով կանխել տարածաշրջանում քրդական ռազմաքաղաքական պոտենցիալի աճը, ինչպես Սիրիայի հյուսիսում, այնպես էլ Իրաքում, Հյուսիսային Իրաք մեկնեց արտգործնախարար Դավութօղլուն:

Դա 2012թ. օգոստոսի 1-ն էր²⁷, իսկ հաջորդ օրը նախարարն այցելեց նաև Քիրկուկ քաղաքը, և լրատվականները միանգամից արձանագրեցին, որ 1937թ. Թևֆիք Ռուշթուկի այցից հետո դա թուրք առաջին պաշտոնատար անձի այցն էր Քիրկուկ, ինչը վկայում էր Անկարայում քրդական հարցում Հյուսիսային Իրաքին տրվող մեծ կարևորության մասին²⁸:

Ըստ թուրքական աղբյուրների՝ 4 ժամ տևած հանդիպման ժամանակ Դավութօղլուն հերթական անգամ պահանջել էր Բարզանիից ակնհայտ օգնություն ցուցաբերել Սիրիայի ընդդիմադիրներին, ինչպես նաև մտահոգություն էր հայտնել PYD-ին ցուցաբերվող օգնության կապակցությամբ՝ հաշվի առնելով, որ այն PKK-ի սիրիական թևն է²⁹: Բարզանին իր հերթին նշել էր, որ ինքը մերժում է ահաբեկչությունը, բայց միևնույն ժամանակ պաշտպանում է աշխարհի բոլոր քրդերին, և սիրիական քրդերին չպաշտպանելը բնական չի լինի³⁰: Հանդիպման վերջում ստորագրվեց երկուստեք ընդունելի դրույթներ պարունակող համատեղ հայտարարություն, որտեղ կողմերն իրենց հավատարմությունը հայտնեցին ահաբեկիչներին չաջակցելու և Սիրիայի տարածքային ամբողջականությունը և ազգային միասնությունը պաշտպանելու հարցում: Մի կողմից թուրքական կողմին հաջողվեց հայտարարության տեքստի մեջ մտցնել այն մասը, որով կողմերը շեշտեցին, որ

26 Turkey's Syrian Kurdish Gamble: A Double Edged Sword - <http://www.al-monitor.com/pulse/originals/2013/08/turkey-contain-syrian-kurdish-autonomy-peace-with-kurds.html>:

27 Davutoglu Visits Erbil for Talks over Kurds Involvement in Syria Crisis - <http://www.almanar.com.lb/english/adetails.php?fromval=3&cid=21&frid=23&seccatid=24&eid=63470>:

28 Davutoglu's Kirkuk Visit Ignites Rage in Baghdad - <http://www.al-monitor.com/pulse/ar/contents/articles/politics/2012/08/baghdads-kirkuk-threat.html>; Davutoğlu pays a visit to Kirkuk - <http://english.sabah.com.tr/national/2012/08/03/davutoglu-pays-a-visit-to-kirkuk>:

29 HaberTürk Haber Ajansı - <http://www.youtube.com/watch?v=NM76c6-g9vg>; Davutoglu Visits Erbil for Talks over Kurds Involvement in Syria Crisis, նույն տեղում:

30 <http://www.youtube.com/watch?v=NM76c6-g9vg>:

ցանկացած զինված ահաբեկչական խմբի կամ կազմակերպության կողմից ուժային վակուումը օգտագործելու փորձը իրենք կհամարեն՝ որպես ընդհանուր սպառնալիք և միասնաբար կգործեն³¹: Մյուս կողմից, սակայն, Բարզանիին հաջողվեց խուսափել այն բանից, որ հայտարարության մեջ ուղղակի հիշատակություն լինի Սիրիայի քրդերի զինված ուժերի և նրանց գործունեության դատապարտման մասին:

Ի դեպ է նշել, որ Նախքան Արբիլ ժամանելը՝ 2012թ. հուլիսի 27-ին, Դավութօղլուն թուրքական «Kanal 24» հեռուստաալիքի եթերում ծավալուն հարցազրույց էր ունեցել Սիրիայի հարցով, որտեղ նշել էր, որ Թունիսի, Եգիպտոսի և Լիբիայի օրինակով Սիրիայում նույնպես պետք է կազմակերպվեն ազատ ընտրություններ՝ որպես նշան սիրիական ժողովրդի ազատ կամարտահայտության³²: Սիրիական քրդերի կապակցությամբ՝ Դավութօղլուն նշել էր, որ կայուն պետական համակարգի վերստեղծումից հետո «իրենք կաջակցեն Սիրիայի քրդերին՝ ձեռք բերելու սահմանադրորեն ամրագրված իրավունքներ»: Դավութօղլուն չվարանեց հաստատել նաև, որ Թուրքիան չի տատանվի՝ հարվածելու Սիրիային, եթե վերջինս շարունակի աջակցել քուրդ անջատողականներին (PKK)³³:

Այսպիսով՝ քրդական շրջանների ինքնավարացումից հետո Թուրքիայի համար աստիճանաբար ավելի հրամայական էր դառնում Սիրիայի ամբողջականության պահպանումը և ապագայում ինքնըստիներքյան թուլացած Սիրիայի կախվածությունը Թուրքիայից: Դրա վկայությունն է հարցազրույցում Դավութօղլուի հնչեցրած հետևյալ միտքը. «Այս պահին Սիրիայի ճակատագիրը վճռող հիմնական դերակատարը Թուրքիան է, մնացյալի (մնացյալ երկրների - Է.Է.) համար Սիրիան սուկ դիվանագիտական հարց է, մինչդեռ Թուրքիան և Սիրիան կողք կողքի կանգնած երկու փայտե տնակներ են, և մեկում ծագած հրդեհը մյուսում էլ կարող է տարածվել»³⁴: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հիմնական «հրդեհը» հենց քրդական գործոնն ու վերջինիս ուժեղացումն են:

2012 թվականի հետագա ընթացքը և 2013 թվականը նշանավոր-

31 Joint Press Statement Regarding the Meeting Between Mr. Ahmet Davutoğlu, Minister of Foreign Affairs of the Republic of Turkey and Mr. Masoud Barzani, IKR President, 1 August 2012, Erbil - http://www.mfa.gov.tr/joint-press-statement-regarding-the-meeting-between-mr_-ahmet-davuto%C4%9Flu_-the-minister-of-foreign-affairs-of-the-republic-of-turkey_-and-mr_-masoud-barzani_-the-president-of-the-iraqi-kurdistan-region.en.mfa:

32 Ahmet Davutoğlu Kanal 24'e Konuştu 27 Temmuz 2012 - <http://www.youtube.com/watch?v=OYVJx0Or1IY>; Davutoğlu: 'Kuzey Suriye' psikolojik harekat - <http://www.sabah.com.tr/Gundem/2012/07/27/davutoglu-kuzey-suriye-psikolojik-harekat>:

33 Turkish FM visits Iraqi Kurdistan - <http://www.ekurd.net/mismas/articles/misc2012/8/state6398.htm>:

34 Davutoğlu: 'Kuzey Suriye' psikolojik harekat, նույն տեղում:

վեցին երկրի հյուսիսային մասերում, հիմնականում Հալեպում և Ռասուլայնում (գերազանցապես քրդաբնակ քաղաք թուրք-սիրիական սահմանին) քրդական և ջիհադիստական ուժերի («ալ-Նուսրա ճակատ», «Իրաքի և Լեվանտի Իսլամական Պետություն») միջև ընթացող թեժ բախումներով՝ հանուն այդ նավթառատ շրջանների³⁵: Պատերազմող կողմերի նպատակադրումների եութենական տարբերությունը թերևս այն է, որ քրդերը հետապնդում են իրենց ապագա պետական կազմավորման համար կայուն կենսատարածքի ազատազրման հարցը³⁶ (տարածք, որ սահման կունենա Իրաքյան Զրդստանի և Թուրքիայի հետ, կներառի քրդաբնակ շրջանները, այդ թվում՝ նավթով հարուստ վայրերը), ինչը ավելի հեռանկարային և հիմնավոր նպատակ է, իսկ ջիհադիստական զանազան խմբեր առաջնորդվում են մասամբ կրոնական գաղափարախոսությամբ, մասամբ՝ սեփական նեղ կլանային շահերով, ուստի և հետապնդում են ավելի կարճաժամկետ նպատակներ: Ի դեպ, ջիհադիստական խմբերը հովանավորվում են Արևմուտքի և իսլամական աշխարհի տարբեր երկրների կողմից, և այդ հանգամանքը նույնպես պայմանավորում է վերջիններիս շահերի տարբերությունը:

2013թ. հուլիսի 16-ից սկսած՝ քրդական ուժերը նկատելի հաջողություններ սկսեցին գրանցել Ռասուլայնի ռազմավարական նշանակության ճակատում, ինչը մեծապես կայունացրեց նրանց դիրքերը և՛ ռազմական, և՛ երկրաքաղաքական առումով:

Հուլիսի 23-ին Արբիլում Բարզանիի հովանավորությամբ մեկնարկեց Զրդական ազգային կոնֆերանսը, որը հազեցած էր համաքրդական միասնության և համերաշխության ոգով, և որում Բարզանին «Ալլահից խնդրեց, որ Օջալանն ազատ արձակվի»³⁷: Հենց կոնֆերանսի օրերին Արբիլում թուրքական ներկայացուցիչները PYD առաջնորդ Սալիհ Մուսլիմին հրավիրեցին Անկարա: Թուրքական աղբյուրները նշում են, որ հրավերը պայմանավորված էր Էրդողանի հրահանգով՝ տրված Ահմեդ Դավութօղլուին և Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպության (MIT) ղեկավար Հաքան Ֆիդանին՝ «PYD ղեկավարներին անձամբ հանդիպելու, բանակցելու, մտահոգություններն իմանալու և իրենց հարգանքը հավաստելու»³⁸: Այցի ընթացքում Մուսլիմի առջև դրվեց երեք հիմնական պահանջ՝ չաջակցելու սիրիական իշխանութ-

35 Ras al-Ain Agreement Between FSA and Kurds Reduces Tensions - <http://www.al-monitor.com/pulse/politics/2013/02/ras-al-ain-agreement-syria.html>:

36 Syrie: les Kurdes combattent les jihadistes pour imposer leur autonomie - <http://www.lorientlejour.com/article/824383/syrie-les-kurdes-combattent-les-jihadistes-pour-imposer-leur-autonomie.html>:

37 Kürt Ulusal Konferansı Erbil'de Toplandı - <http://www.defenceturk.com/index.php?topic=6147.0>:

38 PYD liderine açık mesaj: Suriye Kürtleri safını ortaya koymalı - http://www.radikal.com.tr/politika/pyd_liderine_acik_mesaj_suriye_kurtleri_safini_ortaya_koymali-1143621:

յանը, չսպառնալու Թուրքիայի ազգային շահերին, չձեռնարկելու պետականաստեղծ գործունեությունն նախքան համասիրիական խորհրդարանի գումարումը³⁹:

Հուլիսօգոստոսյան այդ օրերին թուրքական և արևմտյան վերլուծական կենտրոնները սկսեցին ակտիվորեն քննարկել քրդական հարցում Թուրքիայի արմատական շրջադարձը (օգտագործվում էր անգլերեն «U-turn» արտահայտությունը, որը նշանակում է 180 աստիճանի շրջադարձ)՝ յուրովի մեկնաբանելով այդ շրջադարձի պատճառները⁴⁰, ինչպես օրինակ գարնանային զինադադարով պայմանավորված՝ PKK-ի նահանջը Թուրքիայից և PYD հուլիսյան հաղթանակները Ռասուլայնում⁴¹: Նշված պատճառներին պետք է ավելացնել թերևս ամենակարևորը՝ Թուրքիայի ցանկությունը սեփական տիրույթում պահելու PYD-ն, ինչպես նաև ջանալու վերջինիս հանել կառավարական ուժերի դեմ խոստանալով Ասադի տապալումից և համասիրիական խորհրդարանի գումարումից հետո երաշխավորել Սիրիայի քրդերի սահմանադրական իրավունքները:

Թուրքական ենթադրյալ շրջադարձի հարցում էլ ավելի առանցքային դերակատարում ունեցավ այն երկրաքաղաքական երկընտրանքը, որի առջև Թուրքիան կանգնած էր հուլիսօգոստոսյան շրջանում, այն է՝ սեփական սահմանների մոտ ունենալ ծայրահեղ իսլամիստական խմբավորման ենթակայության տակ գտնվող շրջան, թե քրդական դե-ֆակտո ինքնավար շրջան:

Արևմտյան հետազոտողներն այս շրջանում շտապեցին կարծել, թե Թուրքիան ընտրություն է կատարել՝ հօգուտ քրդերի⁴², մինչդեռ, ըստ մեզ՝ ավելի արժանահավատ պետք է համարել այն եզրակացությունը, որ Թուրքիայի համար պարզապես ավելի հրամայական էին դառնում սիրիական տարածքների ամբողջականությունը և հակամարտող կողմերի միջև հավասարակշռության պահպանումը, այն է՝ արաբների և քրդերի միջև՝ միկրոմակարդակում, Թուրքիայի, Սիրիայի, Հյուսիսային Իրաքի և Իրանի միջև՝ մեզոմակարդակում, և Թուրքիայի, ԱՄՆ-ի, Իրանի, Ռուսաստանի, Սիրիայի և Չինաստանի միջև՝ մակրոմակարդակում, ըստ որում հաջող ընթացքի դեպքում Թուրքիան բալանսավորողի դեր էր ստանձնելու բոլոր մակարդակներում: Այդ էր պատճառը, որ Անկարան որոշեց պաշտոնապես կապեր հաստատել PYD-ի և վերջինիս՝ Թուրքիայում բարձրագույն ճարտարագիտական

39 Визит Муслима был запланирован ранее - http://www.portturkey.com/ru/static/8832-vizit_muslima_byil_zaplanirovan_ranee:

40 Is Turkey rethinking the Syrian Kurd issue?, նույն տեղում:

41 Syrian Kurds Want Transitional Administration Now - <http://www.al-monitor.com/pulse/politics/2013/07/pyd-head-interview-turkey-kurds-syria.html>:

42 Kurdish Battles in Syria Raise Turkish Fears - <http://www.bloomberg.com/news/2013-09-02/kurdish-battles-in-syria-raise-turkish-fear-of-new-autonomy-push.html>:

կրթությունն ստացած ղեկավար Սալիհ Մուսլիմի հետ, ինչը թույլ կտար նաև քրդերի շրջանում կասկած և անվստահությունն առաջացնել PYD հանդեպ⁴³:

Սիրիայի կառավարական ռազմական օբյեկտների դեմ ԱՄՆ հավանական հարձակումների համատեքստում Թուրքիան Էապես ակտիվացրեց իր սիրիական քաղաքականությունը, և ըստ ամենայնի, նպատակ էր հետապնդում ցամաքային ներխուժման պարագայում ուղղակիորեն օկուպացնել Սիրիայի հյուսիսը⁴⁴:

Ամերիկյան հարձակման ձգձգումը և ի վերջո ռուս-ամերիկյան համաձայնությունը Սիրիայի քիմիական զենքերի վերացման շուրջ՝ որպես ճգնաժամի կարգավորման միջոց, նկատելիորեն փոփոխեցին Թուրքիայի պահվածքը՝ դարձնելով այն ավելի մեղմ և ճկուն:

1. Թուրքիան պաշտոնապես ողջունեց ռուս-ամերիկյան համաձայնությունը⁴⁵ և միաժամանակ մաղթեց, որ այն չմնա թղթի վրա, այլ կյանքի կոչվի,
2. սկսեց միջազգային հանրության ուշադրությունը բևեռել սիրիական խաղաղ բնակչության կոտորածների վրա և մատնանշել Թուրքիայի մտահոգությունն այդ հարցում⁴⁶,
3. միջոցներ ձեռնարկեց սեփական անվտանգությունը ապահովելու ուղղությամբ: Բանն այն է, որ սեպտեմբերին Թուրքիայի հարավային շրջաններում հաճախադեպ դարձան զանազան կասկածելի խմբերի բացահայտումն ու չեզոքացումը, իսկ սեպտեմբերի 21-ին իրականացվեց հարձակում Անկարայի ոստիկանութ-

43 Օգոստոսի կեսերին՝ դեպի Անկարա Մուսլիմի հերթական այցից հետո թուրքական մամուլում նույնիսկ լուր տարածվեց, որ Անկարան համաձայնել է Սիրիայում քրդական ինքնավարության ստեղծմանը, ինչը, սակայն, հենց հաջորդ օրը հերքվեց արտգործնախարարության կողմից (Турция опровергла согласие на создание курдской автономии в Сирии - <http://lenta.ru/news/2013/08/17/denied/>):

44 «Թուրքիան պատրվակներ ստեղծելով ԱՄՆ-ին դրդում է Սիրիայի դեմ ռազմական գործողությունների». թուրքագետ - <http://armenpress.am/arm/news/731965/turqian-patr vakner-stextselov-amn-in-dr dum-e-siriayi-dem.html>:

45 Dışişleri Bakanlığı'ndan mutabakat açıklaması: Dışişleri Bakanlığı, ABD ve Rusya'nın mutabakatı için "olumlu bir adım" dedi - <http://www.trthaber.com/haber/gundem/disiseri-bakanligindan-mutabakat-aciklamasi-100888.html>:

46 Cumhurbaşkanı Gül, BM'de konuştu - http://zaman.com.tr/dunya_cumhurbaskani-gul-bmde-konustu_2141347.html; Davutoğlu ve Kerry Londra'da buluşuyor, gündem Suriye - http://www.zaman.com.tr/dunya_davutoglu-ve-kerry-londrada-bulusuyor-gundem-suriye_2153877.html:

յան շենքի վրա^{47, 48}: Ըստ «Ռոյթերզ» գործակալության՝ Թուրքիան սկսել է սահմանային պատի կառուցումը՝ ջանալով կանխել փախստականների և զինված խմբերի մուտքը սեփական երկիր⁴⁹: Իսկ հոկտեմբերի 3-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ) մեկ տարով երկարաձգեց թուրքական զինված ուժերը օտարերկրյա երկրներ ռազմական գործողություններ իրականացնելու հնարավորությամբ ուղարկելու կառավարական մանդատը⁵⁰:

Սիրիական քրդերի հարցում Թուրքիան շարունակում է պնդել, որ PYD-ն միավորի իր ուժերը հակաաստրական ուժերի հետ և նախքան համասիրիական խորհրդարանի գումարումը հանդես չգա ինքնուրույն կազմավորման ստեղծմամբ: Միաժամանակ, պաշտոնական Անկարան առաջ է տանում նոր գիծ՝ ուղղված PYD դիրքերի թուլացմանը՝ հայտարարելով, որ այն չի ներկայացնում սիրիական ամբողջ քրդությանը, ընդհակառակը «վերջերս PYD-ի ճնշումներից խիստ անհանգիստ ուժեր կան, որոնք գալիս և մեզնից (Թուրքիայից - Է.Է.) աջակցություն են խնդրում»⁵¹: Այսքանով իսկ՝ հաստատվում են մեր այն ենթադրությունները, որ PYD հետ առնչությունները նպատակ ունեին քրդական աշխարհում թուլացնելու վերջինիս ազդեցությունը և, ըստ էության, պառակտելու սիրիական քրդերին:

Եզրակացություններ և կանխատեսումներ

Ինչպես նշել էինք մեր աշխատանքի սկզբում, վերջինիս օբյեկտը թուրք-սիրիական հարաբերություններն են, իսկ առարկան՝ քրդական գործոնը այդ հարաբերություններում, մասնավորապես՝ 2012-2013թթ.:

47 Հենց նույն օրը Քայսերի (Կեսարիա) նահանգի անվտանգության ծառայությունը Մալաթիայի մայրուղու 25-րդ կիլոմետրի վրա կանգնեցրել էր կասկածելի թվացող ավտոմեքենա և առգրավել քիմիական նյութ: Հրթիռի մարտագլխիկի նմանվող առարկայի ներսում պարունակվող մուգ գույնի հեղուկի էությունը պարզելու համար հրավիրվել էին Ատոմային էներգիայի կազմակերպության և առողջապահության աշխատակիցները: Ավտոմեքենայի ուղևորներից մեկը Սիրիայի քաղաքացի էր, իսկ մյուս երկուսը Շրոնաքից և Մարդինից էին: Առգրավված նյութերի վրա գտնվել էին ռուսերեն գրառումներ (տե՛ս Kayseri'de kimyasal alarm http://www.zaman.com.tr/gundem_kayseride-kimyasal-alarm_2139622.html):

48 Անհայտ անձինք 3 հրթիռ են արձակել Անկարայում ոստիկանության շենքի ուղղությամբ - <http://www.tert.am/am/news/2013/09/21/ankara/>:

49 Турция строит двухметровую стену на границе с Сирией - http://ria.ru/arab_sy/20131007/968297343.html:

50 Suriye tezkeresine Meclis'ten onay - http://www.zaman.com.tr/politika_suriye-tezkeresine-meclisten-onay_2146301.html:

51 “Bizi yanlış anladılar”: Dışişleri Bakanı Ahmet Davutoğlu, tehdit algısına dayanan statükoyu değiştirmenin yolunun demokratikleşme olduğunu belirtti - <http://www.sabah.com.tr/Gundem/2013/10/27/bizi-yanlis-anladilar>:

Ամփոփելով աշխատանքը՝ կատարենք մի շարք եզրակացություններ և կանխատեսումներ՝

1. թուրք-սիրիական հարաբերություններում սկսած երկու երկրների անկախացումից, քրդական գործոնը ունի կարևոր և բովանդակային նշանակություն, որը կարող է ուղղակիորեն ազդել այդ հարաբերությունների վրա: Հակաքրդական պայքարի հիմքի վրա տեղի ունեցավ թուրք-սիրիական մերձեցում 1998թ.-ից հետո, և մասամբ նաև «քրդական հրդեհ»⁵² էր այն գործոնը, որ ձևավորեց թուրք-սիրիական հակամարտային հարաբերությունները սիրիական ճգնաժամի շրջանում,
2. սիրիական քրդերի քաղաքական շարժումները և պայքարը հայտարարվում են Թուրքիայի համար ազգային անվտանգության նշանակության հարցեր, ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին քաղաքական դաշտում,
3. սիրիական ճգնաժամի և դրա հանգուցալուծման համատեքստում Թուրքիան խնդիր ունի՝ հոգուտ իրեն վերաձևելու մերձավորարևելյան նոր բալանսը: Միկրոմակարդակում և մեզոմակարդակում այդ հարցում կարևոր դերակատարություն ունի սիրիական քրդական հարցը,
4. հետպատերազմյան շրջանում Թուրքիային հարկավոր է կանխատեսելի և վերահսկելի Սիրիա, որի համար Թուրքիան ապագայում ըստ ամենայնի կա՛մ կդաշնակցի սիրիական իշխանությունների հետ (անգամ եթե դա լինի ասադյան վարչակարգը), կա՛մ, ինչն ավելի նվազ հավանական է, ռազմական ներխուժմամբ կսատարի Սիրիայի քրդերի ազգային պայքարին,
5. անկախ «4»-ում ենթադրված սցենարներից՝ ներկա պայմաններում և երկարաժամկետ հեռանկարում Թուրքիայի ազգային շահերին հակասում է Սիրիական Քրդստանի, իսկ ավելի ճիշտ՝ Արևմտյան Քրդստանի (քրդ.՝ *Ռոժավա*) ինքնավարության, առավել ևս՝ անկախ պետականության ստեղծումը,

6. Ենթադրում ենք, որ անկախ պատերազմի արդյունքներից՝ Սիրիայում չի ստեղծվի քրդական պետական կազմավորում, քանզի **ա)** չկան դրան նպաստող արտաքին և ներքին ներուժ և քաղաքական կամք, **բ)** քրդերը Սիրիայում կազմում են փոքրամասնություն և թվաքանակով ու հարաբերակցությամբ նկատելիորեն գիջում են թուրքական կամ իրաքյան քրդերին համապատասխան երկրներում, **գ)** սիրիական քրդերը և դրանց ռազմաքաղաքական ղեկավարությունը միատարր չեն, ընդհակառակը՝ վերնախավի շրջանում կա ակնհայտ պայքար, որը մերթնդմերթ վերաճում է գինված բախումների, **դ)** Սիրիայի հետպատերազմյան մասնատումը, ըստ դիտարկումների, չի մտնում համաշխարհային և տարածաշրջանային դերակատարների, այդ թվում՝ Թուրքիայի ռազմաքաղաքական օրակարգի մեջ:

Էդգար Էլբակյան (Աղղամ)

Երևան, հոկտեմբեր 2013թ.